Երևանի կայարանամերձ հրապարակում ստորգետնյա առևտրի և սպասարկման համալիրի ու ավտոկայանատեղի կառուցում

Ծրագրի նկարագիրը

Սույն ծրագրով նախատեսվում է Երևանի կայարանամերձ հրապարակի տարածքում ստորգետնյա ուրբանիզացիայի ստեղծում: Առաջարկվում է կառուցելստորգետնյա առևտրի և սպասարկման համալիր ու ավտոկայանատեղ: Միաժամանակ կնախատեսվի ստորգետնյա անցում Տիգրան Մեծի պողոտայի տակով /շարունակությունը Արցախի պողոտա/, որը խիստ անհրաժեշտ է տրանսպորտային այս բարդ և բավականին ընդարձակ հատվածի համար:
Առաջարկվող նախագծային տարածքի կենտրոնական առանցքով տեղակայված է Երևանի երկաթուղային կայարանի շենքը, աջակողմյան եզրագծով՝ Երկաթուղայինների մշակույթի պալատը, ձախակողմյան մասում՝ հյուրանոցի անավարտ կառույցը: Նախագծային աշխատանքների ընթացքում կքննարկվի տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույցի կառուցման հնարավորությունը:

Տեխնիկական ցուցանիշներ

Նախագծային մակերեսը կկազմի մոտ 10800 քմ /120x90մ/: Հարկայնության խնդիրը /1 կամ 2 հարկ/ հնարավոր կլինի ճշտել տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքում:



Ծրագրի ժամկետներ	Շինարարական աշխատանքների ժամկետը 3 տարի է:
Ծրագրի արժեքը	Շինարարության արժեքըերկու հարկի համարկկազմի շուրջ26 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում:
Ներկա իրավիճակ	Առկա են նախագծային լուծման օրինակներ: